Կուլտուրայի ֆակուլտետի Երաժշտության ամբիոնի

Սեպտեմբերի 2-ի առցանց նիստի

Արձանագրություն թ. 1

Օրակարգ

1. Ընդունելության արդյունքներ
2. Ծավալ-դասաբաշխման քննարկում, հաստիքակազմի վերանայում
3. 2020-21 ուս.տարվա Էլեկտրոնային հարթակում տեղադրվող առարկայական նկարագրերի, թեմատիկ տրոհումների և հարցաշարերի քննարկվում և հաստատում

Լսեցին՝ Ընդունելության արդյունքների մասին:

Արտահայտվեցին՝ Ամբիոնի վարիչ Ա.Գևորգյանը նշեց, որ 2021-2022 ուս.տարում գործիքային կատարողականության բաժին ընդունվել են 29 ուսանող:

Որոշեցին՝ Պարբերաբար 1-ին կուրսերում կազմակերպել դասալումներ, ուսանողների հաջողություններին ականատես լինելու համար:

Լսեցին՝ Ծավալ-դասաբաշխման քննարկում, հաստիքակազմի վերանայում

Արտահայտվեցին՝ Ծանոթացան ընթացիկ դասաբաշխման հետ, հստակեցվեցին ժամերը:

Որոշեցին՝ Օգտագործել բոլոր ռեսուրսները բարեհաջող և բուռն ուսումնական տարի ունենալու համար:

Լսեցին՝ 2020-21 ուս.տարվա Էլեկտրոնային հարթակում տեղադրվող առարկայական նկարագրերի, թեմատիկ տրոհումների և հարցաշարերի քննարկման և հաստատման մասին հարցը:

Արտահայտվեցին՝ Ամբիոնի վարիչ Ա.Գևորգյանը և ամբիոնի որակի պատասխանատու Կ. Մարտիրոսյանը ներկայացրեցին, որ ամբիոնում արդեն պատրաստ են և վերանայվել են նոր ուսումնական տարվա առարկայական նկարագրերը և թեմատիկ տրոհումները,

համապատասխանեցվել են ներկայացված նոր պահանջներին: Բոլոր առարկաների համար պատրաստված փաթեթները արդեն տեղադրված են էլեկտրոնային հարթակում:

Որոշեցին՝ Հաստատել առարկայական նկարագրերը, թեմատիկ տրոհումները և միջանկյալների հարցաշաշերը:

ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉ՝ Ա.Կ.ԳԵՎՈՐԳՅԱՆ

Քարտուղար՝ Ա.Մկրտչյան

Կուլտուրայի ֆակուլտետի Երաժշտության
ամբիոնի Հոկտեմբերի 28-ի առցանց նիստի
Արձանագրություն թ. 2

Օրակարգ՝

1. Աշխատանքները առցանց կազմակերպելու վերաբերյալ

Լսեցին՝ Աշխատանքները առցանց կազմակերպելու վերաբերյալ հարցը:

Արտահայտվեցին՝ Երաժշտության ամբիոնի վարիչ Ա. Գևորգյանը ներկայացրերց, որ ըստ կառավարության որոշման, երկրում տիրող համաճարակային իրավիճակը հաշվի առնելով առաջարկվում է հնարավորության դեպքում հաստատություններում անցում կատարել առցանց ուսուցման, միաժամանակ ապահովելով գործառույթների անխափան իրականացումը:

Որոշեցին՝ Ամբողջությամբ անցում կատարել հեռավար ուսուցման:

ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉ՝

Ա.Կ.ԳԵՎՈՐԳՅԱՆ

Քարտուղար՝ **Ա.Մկրտչյան**

Կուլտուրայի ֆակուլտետի Երաժշտության ամբիոնի

Նոյեմբերի 13-ի առցանց նիստի

Արձանագրություն թ. 3

Օրակարգ՝

1. **Աշխատանքների կազմակերպումը շարունակել հեռավար**

Լսեցին՝ Աշխատանքների կազմակերպումը հեռավար շարունակելու մասին:

Արտահայտվեցին՝ Ամբիոնի վարիչ Ա.Գևորգյանը ներկայացրեց ՀՀ Առողջապահության նախարարության որոշումը՝ աշխատանքների կազմակերպումը հեռավար շարունակելու մասին:

Հիմք ընդունելով հանրապետության ազգաբնակչության բժշկական ապահովության պահպանման համար ՀՀ Առողջապահության նախարարության ս/թ հոկտեմբերի 28-ի գրությունը և ի լրումն ՀՀ Կրթության և գիտության, մշակույթի և սպորտի նախարարության նախարարի գրությունների առաջարկում եմ ձեր տնօրինած հաստատություններում ուսումնական գործընթացի և հաստատության աշխատողների կողմից իրականացվող աշխատանքների կազմակերպումը շարունակել առցանց ձևով:

Որոշեցին՝ Ուսումնական գործընթացի և հաստատության աշխատողների կողմից իրականացվող աշխատանքների կազմակերպումը շարունակել առցանց ձևով:

ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉ՝ Ա.Կ.ԳԵՎՈՐԳՅԱՆ

Քարտուղար՝ Ա.Մկրտչյան

Կուլտուրայի ֆակուլտետի Երաժշտության ամբիոնի
Դեկտեմբերի 10-ի նիստի Արձանագրություն թ. 4

Օրակարգ՝

1. **Երաժշտության ամբիոնի 2019-20 ու.տարվա տարեկան հաշվետվության քննարկում հաստատում:**

Լսեցին՝ Երաժշտության ամբիոնի 2019-20 ու.տարվա տարեկան հաշվետվության քննարկման և հաստատման մասին:

Արտահայտվեցին՝ Ամբիոնի վարիչ Ա.Գևորգյանը ներկայացրերց, որ հաշվետու տարում ելնելով հանրապետությունում առկա համաճարակային իրավիճակից ամբիոնը չի կարողացել իրականացնել մի շարք ծրագրեր: Ամեն տարի ամբիոնը համերգներ էր ունենում հանրապետության տարբեր մարզերում, տարբեր երաժշտական դպրոցներում:
Այս տարի ցավոք չեղավ այդպիսի հնարավորություն: Ամեն դեպքում հաշվետվությունը կազմվել է ըստ ամբիոնի կատարած աշխատանքի:

Որոշեցին՝ Հաստատել Երաժշտության ամբիոնի 2019-20 ուս.տարվա տարեկան հաշվետվությունը:

ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉ՝ Ա.Կ.ԳԵՎՈՐԳՅԱՆ

Քարտուղար՝ Ա.Մկրտչյան

Փետրվարի 19-ի նիստի

Արձանագրություն թ. 5

Օրակարգ՝

1. **2020-21 ուս.տարվա 3-րդ կուրսի պրակտիկայի անցկացման մասին:**
2. **4-րդ կուրսի ավարտական ծրագրերի մասին քննարկում:**

Լսեցին՝ 2020-21 ուս.տարվա 3-րդ կուրսի պրակտիկայի անցկացման մասին:

Արտահայտվեցին՝ Ամբիոնի վարիչ Ա.Գևորգյանը ներկայացրերց, որ ելնելով հանրապետությունում առկա համաճարակային իրավիճակից, պրակտիկան չենք կարող կազմակերպել երաժշտական դպրոցներում: Այդ իսկ պատճառով առաջարկվեց 3-րդ կուրսի պրակտիկան անցկացնել ամբիոնի նվագախմբերում մարտի 1-ից մինչև մարտի 29-ը /4 շաբաթ/ տևողությամբ: Պրակտիկայի ղեկավարներն են պրոֆեսոր Հրաչ Նազարյանը և դոցենտ Սերինե Թադևոսյանը:

Որոշեցին՝ Հաստատել պրակտիկայի ժամկետները: Հետևել անցկացման ընթացքին:

Լսեցին՝ 4-րդ կուրսի ավարտական ծրագրերի մասին քննարկում:

Արտահայտվեցին՝ Ամբիոնի վարիչ Ա.Գևորգյանը նշեց, որ երկարատև դադարից հետո նվագախմբերը սկսել են փորձերը: Փորձերը ընթանում են բուռն հունով: Կուրսի ղեկավարներին հանձնարարվեց հետևել փորձերին, կատարել ծրագրային շտկումները:

Որոշեցին՝ Հետևել փորձերի ընթացքին, հստակեցնել ծրագրերը:

ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉ՝ Ա.Կ.ԳԵՎՈՐԳՅԱՆ

Քարտուղար՝ Ա.Մկրտչյան

Կուլտուրայի ֆակուլտետի Երաժշտության ամբիոնի

Ապրիլի 2-ի նիստի

Արձանագրություն թ. 6

Օրակարգ՝

1. **2020-21 ուս.տարվա 3-րդ կուրսի պրակտիկայի անցկացման ամփոփում**
2. **Էլ. մատյաններ ստեղծելու մասին:**
3. **Ամփոփիչ ատեստավորման քննության հանձնաժողովի կազմի մասին քննարկում:**

Լսեցին՝ 2020-21 ուս.տարվա 3-րդ կուրսի պրակտիկայի անցկացման ամփոփում

Արտահայտվեցին՝ Ամբիոնի վարիչ Ա. Գևորգյանը ներկայացրեց, որ մարտի 29-ին ավարտվեց ուսումնական պրակտիկան: Այն անցավ բավականին արդյունավետ: Ուսանողները սահմանված ժամերին ներկա էին գտնվում նվագախմբերի փորձերին: Հետևում էին դիրիժորների աշխատանքին, ուսումնասիրում էին այն ստեղծագործությունների պարտիտուրաները, որոնք կատարում էր նվագախումբը: Երբեմն-երբեմն ուսանողները փորձում էին ինքնուրույն անցկացնել փորձերը:

Պրակտիկան անցել է բավականին արդյունավետ և ուսանողներին տվել է բավականաչափ գործնական հմտություններ:

Լսեցին՝ Էլ. մատյաններ ստեղծելու մասին:

Արտահայտվեցին՝ Ամբիոնի վարիչ Ա. Գևորգյանը ներկայացրեց, որ ԷԿԿ բաժնի կողմից մշակվել է էլեկտրոնային մատյանների ձևաչափ: Շուտով թղթային մատյանները կհանվեն գործածությունից:

Որոշեցին՝ Դասախոսներին հանձնարարվեց ուշադիր լինել մատյանների լրացման առանձնահատկություններին:

Լսեցին՝ Ամփոփիչ ատեստավորման քննության հանձնաժողովի կազմի մասին քննարկման մասին:

Արտահայտվեցին՝՝ Ամբիոնի վարիչ Ա. Գևորգյանը ներկայացրեց ամփոփիչ ատեստավորման քննության հանձնաժողովի կազմը: Այս տարի հանձնաժողովի նախագահ է ընտրվել Կոմիտասի անվան Երևանի պետական կոնսերվատորիայի հայ երաժշտության ֆոլկլորագիտության ամբիոնի պրոֆեսոր, ՀՀ ժողովրդական արտիստ Թովմաս Պողոսյանը, անդամներն են՝ ՀՀ ԶՈՒ ԳՇ ռազմանվագախմբային բաժնի պետ, գլխավոր զինվորական դիրիժոր, ՀՀ վաստակավոր արտիստ Արմեն Պողոսյանը և ՀՀ գուսանական երգի պետական համույթի գեղարվեստական ղեկավար Գևորգ Մանասյանը:

Որոշեցին՝ Հաստատել ամփոփիչ ատեստավորման քննության հանձնաժողովի կազմը:

ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉ՝ Ա.Կ.ԳԵՎՈՐԳՅԱՆ

Քարտուղար՝ **Ա.Մկրտչյան**

Կուլտուրայի ֆակուլտետի Երաժշտության ամբիոնի

Մայիսի 24-ի նիստի

Արձանագրություն թիվ 7

Օրակարգ՝

1. Ամփոփիչ ատեստավորման քննության արդյունքների ամփոփում:
2. 2-րդ կիսամյակի ամփոփիչ քննությունների անցկացման մասին հարցերի քննարկում:

Լսեցին՝ Ամփոփիչ ատեստավորման քննության արդյունքների ամփոփման մասին:

Արտահայտվեցին՝ Ամբիոնի վարիչ Ա.Գևորգյանը ներկայացրեց, որ ավարտական պետական քննությունները անցան շատ լավ: Ուսանողները ներկայացրեցին շատ լավ ծրագիր: Նվագախմբերը գտնվում էին արտակարգ վիճակում: Հանձնաժողովը բարձր գնահատեց խմբերի ղեկավարների, նվագախմբի ղեկավարների և ուսանողների կատարած աշխատանքը: Պետական քննությունների արդյունքները կամփոփվեն հանձնաժողովի նախագահի հաշվետվության մեջ:

Որոշեցին՝ Ներկաները դրական արձագանքեցին: Որոշվեց հետևել նվագախմբերին, գործիքային մասի բացթողումները վերացնելու նպատակով անցկացնել փորձեր:

Լսեցին՝ 2-րդ կիսամյակի ամփոփիչ քննությունների անցկացման մասին հարցերի քննարկման մասին:

Արտահայտվեցին՝՝ Ամբիոնի վարիչ Ա.Գևորգյանը ներկայացրեց, որ շուտով կսկսվեն կիսամյակի ավարտական քննությունները: Ամբիոնի որակի պատասխանատու Գայանե Հեբոյանի հետ միասին ներկա կգտնվեն բոլոր քննություններին, կծանոթանան ծրագրերի հետ: Դասախոսներին առաջարկվեց լինել խիստ և պահանջկոտ ուսանողների հանդեպ:

Որոշեցին՝ Հետևել քննությունների ընթացքին, արդյունքները քննարկել հաջորդ ամբիոնի նիստում:

ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉ՝ Ա.Կ.ԳԵՎՈՐԳՅԱՆ

Քարտուղար՝ Ա.Մկրտչյան

Կուլտուրայի ֆակուլտետի Երաժշտության
ամբիոնի

Հունիսի 25-ի նիստի Արձանագրություն թիվ 8

Օրակարգ՝

1. **2020-2021 ուս.տարվա կիսամյակային քննությունների անցկացման մասին**
2. **2020-2021 ուսումնական տարվա դասալումների ամփոփման մասին**

Լսեցին՝ 2020-2021 ուս.տարվա կիսամյակային քննությունների անցկացման մասին:

Արտահայտվեցին՝ Ամբիոնի վարիչ Ա.Գևորգյանը նշեց, որ կիսամյակային քննությունները անցան ըստ գրաֆիկների:

Ամբիոնի նսիտում քննարկվել էին ներկայացված հարցաշարերը այն առարկաների համար, որոնց քննությունը անցկացվեց տեսական կարգով: Հարցատոմսերը մշակված, կնքված և ստորագրված էին: Քննությունները լավ անցան, ուսանողները պատրաստ էին:

Որոշեցին՝ Մյուս ուսումնական տարվա համար վերանայել հարցաշարերը և հարցատոմսերը:

Լսեցին՝ 2020-2021 ուսումնական տարվա դասալումների ամփոփման մասին:

Արտահայտվեցին՝ Ամբիոնի վարիչը նշեց, որ ընդանուր առմամբ գոհ է դասալսման արդյունքներից: Դասախոսներից պահանջվում է էլ ավելի ուշադիր և հետևողականորեն վերաբերվել դասերին: Ավելի խիստ լինել ուսանողների բացակայությունների հարցում: Թարմացնել ծրագրերը:

Որոշեցին՝ Ի նկատի ունենալ բոլոր խորհուրդները: Կրթական որակն էլ ավելի բարձրացնելու նպատակով թարմացնել առարկայի ծրագրերը:

ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉ՝ **Ա.Կ.ԳԵՎՈՐԳՅԱՆ**

Քարտուղար՝ **Ա.Մկրտչյան**